Հարգելի՛ գործընկեր,

Տեղեկացնում ենք, որ 2018 թ. հունիսի 7-8-ը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը կազմակերպում է միջազգային գիտաժողով՝ նվիրված անվանի դիվանագետ և վաճառական Մանուկ Բեյ Միրզայանին (1769-1817):

Գիտաժողովին նախատեսվում է հետևյալ հիմնախնդիրների քննարկումը՝

- Մանուկ բեյ Միրզայանի կյանքը և գործունեությունը:
- Ռուս-թուրքական պատերազմը (1806-1812) և Բուխարեստի հաշտության պայմանագիրը:
- Օսմանյան և Ռուսական կայսրությունների և Բալկանյան երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները 18-րդ դարի երկրորդ կեսից - 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում:
- Ազգային փոքրամասնությունները Օսմանյան և Ռուսական կայսրությունների փոխհարաբերություններում:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը, անգլերենը: Զեկուցումների տևողությունը՝ մինչև 15 րոպե:

Զեկուցումների հիմնադրույթները կհրատարակվեն:

Խնդրում ենք մասնակցության հայտը և զեկուցման թեզերն ուղարկել մինչև 2018 թ. ապրիլի 20-ը հետևյալ հասցեով՝

Երևան 0019, Մարշալ Բաղրամյանի պողոտա, 24/4,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
Կարոլինա Սահակյան, հեռ. (+374 98) 090320, էլ. փոստ՝ csahakyan@gmail.com
Հասմիկ Ստեփանյան, հեռ. (+374 55) 528903, էլ. փոստ՝ hasmikstepanyan@yahoo.com

Գիտաժողովի կազմկոմիտե

Մանուկ Բեյ Միրզայեանի (1769-1817) մահուան 200 ամեակի առթիւ 2018թ. Երևանում միջազգային գիտաժողով հրավիրելու շուրջ

Մանուկ Մարտիրոսի Միրզայեանը 18-19դդ. օսմանեան եւ ռուսական դիվանագիտական ասպարեզի ամենահայտնի դեմքերից է, բարձր կարգի սեղանաւոր, օսմանեան պետութեան ու բանակի մատակարար, մեծ վաճառական:

Հայրը՝ ծագումով Աշտարակի Կարբի գյուղից է եղել: Մարտիրոս Հոբի Միրզայեանը 1744թ. դուրս է եկել Կարբիից, Անատոլիայով անցել Կոստանդնուպոլիս, հաստատվել Ռուսջուկում, ուր 1769թ. ծնվել է Մանուկը:

Միրզայեան Մանուկ բեյը միաժամանակ եղել է Օսմանեան կայսրութեան և Ռուսաստանի հպատակ, հարգուած հիւր տարբեր՝ ավստրիական, ռուսական տիրակալների պալատներում:

Նա ունեցել է մետաքսի, բրդի, բամբակի, ծխախոտի, համեմունքների և մեղրամոմի վաճառքի մենաշնորհ:

Պեզճեան Հարութիւն Ամիրայի և Միրզայեան Մանուկ բեյի անուան հետ է կապվում ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Սուլթան Մահմուդ Բ-ին անասելի ծանր վիճակից հանելու եղելութիւնը: Մանուկ բեյն աջակցել է նաև տապալելու Օսմանեան կայսրութիւնում ենիչերական հզոր ու երկրի համար չափազանց վտանգավոր դարձած վարչակարգը:

Օսմանեան կայսրութեանը մատուցած ծառայութիւնների համար 1808թ. սուլթանից ստացել է Մոլդովայի իշխանի՝ *Boğdan Prensi* եւ *Bey*-ի տիտղոսներ, որոշ ժամանակ փաստորեն դառնալով Մոլդավիայի կառավարիչ: 1808թ. Կ.Պոլիս է եկել, Բարձր Դռան և սուլթանական պալատի *դրագման*՝ դիվանագիտական բանակցութիւնների գլխավոր թարգման նշանակվել, արտաքին գործոց նախարարի օգնականի մակարդակով:

Մեծ հաջողութեամբ լուծել է ֆինանսական դժվարին խնդիրներ: 1806-12թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ այս յայտնի դիվանագետը, վաճառականն ու սեղանավորը, կայսրութեան մատակարարներից է եղել, զբաղվել օսմանեան բանակի պարենավորմամբ եւ ռազմական նշանակութեան կառոյցների նորոգութեամբ:

Եղել է օսմանեան Դանուբեան բանակի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքթարի խորհրդականը, օժտված՝ ռուսների հետ հաշտութեան բանակցութիւններ վարելու լիազորութեամբ:

Նա գտնում էր, որ իր ազգի ճակատագիրը պետք է կապել քրիստոնա Ռուսաստանի հետ և ընդունում է նաև ռուսական հպատակութիւն:

Նրան լսում, վստահում և նրա բարեկամութիւնն էին վայելում ռուս ամենահայտնի զորավարներն ու քաղաքական գործիչները (Բագրատիոն, Կամենսկի, Կուտուզով: Վերջինս Մանուկ բեյին իւր ընկերն էր համարում): Վերադառնալով Բուխարեստ, 1804-8թթ. կառուցում է Բուխարեստի տեսարժան վայրերից մեկը հանդիսացող մի պալատ, որ մինչ օրս հայտնի է *Մանուկի խան* անունով:

Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ դիվանագիտական հմտութիւնների շնորհիվ են կայացել ռուս-թուրքական 1806-1812թթ. պատերազմի հաշտութեան մի շարք բանակցութիւնները, որոնց արդիւնքում 1812թ. իր կառուցած պալատում («Մանուկի խանը») կնքվել է Բուխարեստի ռուս-թուրքական հաշտութեան պայմանագիրը:Ռուսական կողմից այն ստորագրել է Կուտուզովը: Բուխարեստի պայմանագիրը ձախողել է Նապոլեոն Բոնապարտի՝ այս երկու պետութիւններին պատերազմի մեջ ներքաշելու ծրագրերը, սակայն թուրքական կողմը Միրզայեանին մեղադրել է դավաճանության մեջ:

Ալեքսանդր Առաջինն իր պետերբուրգեան պալատում հիւրընկալում է նրան և կնոջը, շնորհում ս.Վլադիմիր ասպետի 3-րդ աստիճանի շքանշան:

1813թ. Բուխարեստից անցել է Տրանսիլվանիա, ապա հաստատվել Քիշինևում և դարձել ռուսահպատակ: 1814 թվականին Մանուկ Բեյին շնորհվել է պետական խորհրդականի աստիճան:

Մանուկ Բեյը Հայաստանի ազատագրումը կապել է Ռուսաստանի հետ: Այցելել է Հայաստան, նյութական օժանդակություն ցույց տվել Էջմիածնի, Մուշի, Երուսաղեմի և այլ վայրերի վանքերին: Բուխարեստի հայոց եկեղեցու մերձակայքում հիմնել է քաղաքում առաջին հայկական դպրոցը (1817): Մանուկ Բեյի արխիվը պահվում է Բուխարեստի Պատմութեան թանգարանում:

Նա 100 հայ ընտանիք է տեղափոխում, և պատրաստվում էր շուրջ կես միլիոն օսմանահպատակ հայերի ևս տեղափոխել Վալախիա ապրելու: Ալեքսանդր Առաջինը խոստանում է Մանուկ Բեյին, որ Բեսարաբիան կդառնա օսմանահպատակ տեղահանված հայերի փրկութեան հանգրվաններից: Նրան հայկական իշխան էին հորջորջում:

300 000 ոսկե լեյով նա հողեր է գնում Ռումինիայում: Նրա գնած հողերում 40 գյուղեր կային, իսկ 1817թ., Քիշինևից 36կմ արևմուտք, Հընչեշտում հիմնում է իր ընտանեկան սքանչելի ապարանքը՝ ֆրանսիական կլասիցիզմի ոճով, կառուցված հայազգի ճարտարապետ Բերնարդացու կողմից: Պալատի առաստաղները նկարազարդել էր մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին: Բլրի վրա կառուցված պալատը շրջապատված էր պարսպով: Կարապներով արհեստական լճակը, շատրվանները, ապարանքի տարբեր մասերը միմյանց միացնող ապակեպատ, էկզոտիկ մրգերի ձմեռային այգիները (որոնց տակ գետնափոր ուղիներ կային) զարմացնում էին իրենց շքեղությամբ, որից ցավոք սրտի համարյա ոչինչ չի պահպանվել:

1993թ. պալատը ստանում է ճարտարապետական հուշարձանի կարգավիճակ և այժմ համարվում է Մոլդավիայի ազգային հարստությունը: Պատմում են, որ այս պավիլիոնների տակ էր թաղուած

Մանուկ բեյի հարստութիւնը և ազգային հերոսներից Կոտովսկին շատ հաճախ էր այստեղ գալիս, փնտրելու այն: Ասում են նաև, որ որ հենց նա էլ գտել ու յուրացրել է Մանուկ բեյի հարստութիւնը:

Ըստ Միրզայեանի այստեղ հիմնադրվելու էր Ալեքսանդրապոլ հայաքաղաքը: Շարունակելով տաղանդավոր վաճառականի իր գործունեութիւնը, նա հսկայական գումարներ էր ներդնում հայկական հզոր համայնք ստեղծելու վրա: Նրա երազանքը չիրականացավ:

Շատ հայերը հիմնվեցին Քիշինևում, ստեղծելով լավ համայնք: Նա մեծ ավանդ է ունեցել մոլդավական գինեգործության մեջ՝ որպես ֆրանսիական տեխնոլոգիաների շարունակող: Նա այդպես էլ չհասցրեց ապրել իր պերճաշուք ապարանքում:

Հանկարծամահ է եղել 1817թ. հուլիսի 2-ին Մոլդավիայի Բեսարաբիայի մարզի Հըչեշտ (Կոտովսկի) քաղաքի իր ագարակում, թողնելով Մարի անվամբ կնոջը և 6 որբերի: Այս մահը խորհրդավորությամբ է պատված: Թաղված է Քիշինևում, իր կառուցած ս.Աստվածամոր եկեղեցում: Իր ազգի համար նա կառուցել է եկեղեցիներ, դպրոցներ: Հարազատ Ռուսաճուկում կառուցել է կամուրջներ, քարվանսարաներ, ջրաղացներ, զարկ տվել հանքարդյունաբերութեանը: Բալկանեան շատ քաղաքներ իրենց տնտեսական զարգացմամբ մեծապես պարտական են Մանուկ Միրզայեանին: Նա հիմնել է մանուֆակտուրաներ, կալվածքներ, տրամադրել փոխառութիւններ: Նրա անվամբ կոչվել են ռումինական երկու գյուղ: Նրա մասին ժամանակակիցները հիշատակում են որպես ծայրաստիճան ազնիվ մեկի:

Մխիթարեան հայրերի հետ նա հայոց լեզվի դասագիրք է հրատարակել դպրոցների համար:

Նրա ժառանգները, մասնավորապես Գրիգոր որդին, որ Փարիզում էր մահացել, մեծ ժառանգություն էր թողել Մոսկվայի Լազարեան ինստիտուտի, որի շքեղագույն *Մանուկի դահլիճը* թալանվեց ու ոչնչացվեց բոլշևիկների կողմից:

Մանուկ Բեյն ամուսնացած է եղել հայազգի իշխանուհի Դելյանովայի հետ: Զավակներն էին Գրիգոր Հովհաննեսը և Մարի Մանուկը: Թոռնուհիներն էին իտալական կոմսուհի Ելիզավետա Շենտոնին, գերմանական բարոնուհի Օլգա Հոցֆելդ-Դրախթեմբերգը: Վերջինիս ծոռն է կանադացի ճարտարապետ Փեթեր ֆոն Քորֆը: Իր մի ասուլիսում նա հպարտորեն է խոսել իր հայկական արմատների մասին:

Զարմանալի է, որ Մանուկ Միրզայանի ժառանգները մինչ օրս հավակնություն չեն ցուցաբերել մեծ հայի ժառանգութեան համար:

Dear colleagues,

It is our pleasure to inform you that the Institute of Oriental Studies of National Academy of Sciences of the Republic of Armenia organizes a conference devoted to the famous diplomat and merchant Manuk Bey Mirzayan (1769-1817) which will take place on June 7-8, 2018.

We envisage the discussion of the following issues:

- Manuk Bey Mirzayan's life and activity,
- The 1806-1812 Russian-Turkish war and The Treaty of Bucharest,
- The diplomatic relations between the Ottoman and Russian Empires, and the Balkan Countries in the period of the second half of the 18th century and the beginning of the 19th century,
- The cooperation of Manuk Bey Mirzayan with the ruling class of the Ottoman and Russian Empires, and his influence on them.
- National minorities in the frames of the relations between the Ottoman and Russian Empires.

The working languages of the conference are Armenian, Russian and English.

The time for speech time 15 min.

The main issues of the reports will be published.

Please send us the filled in application form and the thesis of the reports until the April 20 of 2018 to the following address:

Yerevan, 0019, Marshal Baghramyan av., 24/4, Institute of Oriental Studies NAS RA

Karolina Sahakyan, Tel. (+374 98) 090320, E-mail: **csahakyan@gmail.com**

Hasmik Stepanyan, Tel. (+374 55) 528903, E-mail: **hasmikstepanyan@yahoo.com**

The organizing committee of the conference

International Conference on the Occasion of the 200th Anniversary of the Death of Manuk Bey Mirzayan (1796-1817) (Yerevan, 2018, 10-11 June)

Manuk Bey Mirzayan is one of the most famous figures of the Ottoman and Russian diplomatic circles of the 18th and 19th centuries. His father was born in the village of Karbi, Ashtarak district. He was simultaneously a subject of the Ottoman Empire and Russia, a respected guest in the palaces of Austrian and Russian rulers. He had a monopoly on the sale of silk, wool, cotton, tobacco, spices and beeswax.

Pezchyan Harutyun Amira and Manuk Bey Mirzayan led Sultan Mahmud II out of a very difficult situation during the Russian-Turkish war. Manuk Bey helped in overthrowing the powerful and dangerous for the country Janissary regime in the Ottoman Empire. In 1808, the Sultan awarded him the title of Moldovan prince (Boğdan Prens) for the services rendered by the Ottoman Empire and, in fact, for a while he would become the ruler of Moldova.

In 1808 he returned to Constantinople and was appointed chief interpreter (dragoman) of diplomatic negotiations at the level of foreign ministers. With great success he solved complex financial problems. During the Russo-Turkish War, a well-known diplomat and merchant was one of the suppliers of the empire, provided provisions for the Ottoman army and was engaged in the reconstruction of military buildings.

The military commander of the Danube army, adviser to Mustafa Pasha Bairaktar, was given the authority to conduct peace talks with the Russians.

In collaboration with the Mekhitarists, he published an Armenian textbook for schools.

His heirs, in particular his son Grigor, who died in Paris, left a great legacy to the Moscow Lazarevsky Institute. There was a luxurious hall dedicated to Manuk, which was robbed and destroyed by the Bolsheviks. Manuk Bey was married to Princess Delianova of Armenian descent. Grigor Hovhannes and Mari Manuk were their children. Their grandsons were the Countess Elizabeth Shentoni, the German Baroness Olga Houszfeld-Drachtemberg. The great-grandson of the latter is the Canadian architect Peter von Korf. During his interview, he spoke with pride about his Armenian roots. It's amazing that the heirs of Manuk Mirzayan did not pretend to the wealth of the great Armenian until today.

Уважаемые коллеги,

Сообщаем, что Институт востоковедения НАН РА 7-8 июня 2018 г. проводит международную конференцию, посвященную выдающемуся дипломату и купцу Манук Бею Мирзаяну (1769-1817).

На конференции предполагается обсуждение следующих ключевых проблем:

- Жизнь и деятельность Манук Бея Мирзаяна;
- Русско-турецкая война 1806-1812 гг. и Бухарестский мирный договор;
- Дипломатические отношения между Османской, Российской империями и балканскими странами во второй половине 18-ого и начале 19-ого веков;
- Взаимоотношения и влияние Манук бея на правящие круги Османской и Российской империй;
- Национальные меньшинства во взаимоотношениях Османской империи и России;

Рабочие языки конференции: армянский, русский, английский. Регламент для докладчиков до 15 минут.

Тезисы докладов будут опубликованы.

Заявки на участие в конференции и **тезисы докладов просим** присылать по прилагаемой форме в Организационный комитет конференции до 20-ого апреля 2018 года по следующему адресу:

Ереван 0019, проспект Маршала Баграмяна 24/4,

Институт востоковедения НАН РА

Каролина Саакян, тел. (+374 98) 090320, эл. почта: csahakyan@gmail.com
Асмик Степанян, тел. (+374 55) 528903, эл. почта: hasmikstepanyan@yahoo.com

Организационный комитет конференции

Международная конференция по случаю 200-летия со дня смерти
Манук Бей Мирзаяна (1796-1817)
(Ереван, 2018, 7-8 июнь)

Манук Бай Мирзаян - один из самых известных фигур османских и российских дипломатических кругов 18-19-го века. Его отец родился в селе Карби Аштаракского района. Он был одновременно подданным Османской империи и России, уважаемым гостем во дворцах австрийксих и российских правителей. У него была монополия на продажу шелка, шерсти, хлопка, табака, специй и пчелиного воска.

Пезчян Арутюн Амира и Манук бэй Мирзаян вывели султана Махмуда Второго из очень затруднительной ситуации во время русско-турецкой войны. Манук бэй помог в свержении мощного и опасного для страны янычарского режима в Османской империи. В 1808 г. султан вручил ему титул молдавского князя (Boğdan Prens) за оказанные услуги Османской империи и фактически, некоторое время он стал бы правителем Молдавии.

В 1808 г. вернулся в Константинопль и был назначен главным переводчиком (драгоман) дипломатических переговоров на уровне министров иностранных дел. С большим успехом решал сложные финансовые проблемы. В годы русско-турецкой войны известный дипломат и торговец был один из поставщиков империи, предоставлял провизию для османской армии и занимался реконструкцией строений военного назначения.

Военачальником данубской армии, советником Мустафа паши Байрактара, был наделен полномочиями вести мирные переговоры с русскими.

В сотрудничестве с Мхитаристами он публиковал учебник армянского языка для школ.

Его наследники, в особенности его сын Григор, который умер в Париже, оставил большое наследие Московскому Лазаревскому институту. Там был роскошный зал посвещенный Мануку, которы был ограблен и уничтожен большевиками. Манук Бей был женат на княгине Деляновой армянского происхождения. Григор Оганнес и Мари Манук были их детьми. Их внуками были графиня Елизавета Шентони, немецкая баронесса Ольга Хоцфельд-Драхтемберг. Правнуком последней является канадский архитектор Петр фон Корф. Во время соего интервью он с гордостью говорил о своих армянских корнях. Удивительно, что наследники Манука Мирзаяна до сегоднешнего дня не претендовали на богатство великого армянина.